

Դավիթ Ռ. Մոսինյան
Փիլ. գիյր. թեկնածու

**Պատերազմը մեծ գործ է պետության համար,
այն կյանքի ու մահվան հիմքն է, գոյության ու
վախճանի ուղին՝:**

Սուն Յգի

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդածություններ «քառօրյա պատերազմի»² շուրջ*

Բանալի բառեր – պատերազմ, հիշողություն, մոռացում, հերոս, հերոսական, տրավմա, անգիտակցական, փիլիսոփայություն, ինքնություն:

Մուտք

Քանի որ պատերազմները վաղուց դադարել են լինել թագավորների կամ առաջնորդների կռիվներ՝ հանուն տարածքի կամ ուղղակի ու «անմեղ» տիրապետության, ուստի այսօր մտավոր լուրջ ձիգեր են հարկավոր՝ աշխարհաքաղաքական խորապատկերում կողմնորոշվելու և պատերազմական ոլորաններում սեփական մասնակցության չափը պարզելու համար:

Եվ, ուրեմն, խնդիր կա ավելի լայն, փիլիսոփայական համաշարադրանքում մտածելու ամենայն պատերազմ, հակառակ դեպքում կմնանք իրերի ընթացքի կրավորական մասնակիցը և կգրկվենք անգամ սեփական ճակատագրի վկան լինելու բախտից: Իսկ փիլիսոփայական համատեքստում դիտարկել նշանակում է արժևորել պատերազմի գոյությունը և իմաստավոր դարձնել դրա համակեցությունը մարդու հետ: Եվ այդ դիտանկյունն ապահովող հարցադրումը ոչ թե «ինչո՞ւ են տեղի ունենում

1 Сунь-Цзы, Трактат о военном искусстве. Пер. Н. И. Конрада. СПб, «Азбука», 2015, с. 43:

2 «Քառօրյա պատերազմ» հասկացությունը չակերտներում գործածելու իրողությունը մեզանում հիմնավորվում է 1994 թ. մայիսյան զինադադարի իրավական ուժը պահպանելու անհրաժեշտությամբ: Խմբ.:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 28.08.2016:

պատերազմներ» պատմաքաղաքական հատույթն է լինելու, այլ ավելի ճիշտ՝ «ինչո՞ւ չեն կարող պատերազմներ չլինել» հարցը: Իսկ բարոյագիտական կտրվածքով՝ խնդիրը դառնում է հարցը սև-սպիտակ, լավ-վատ երկրնորանքներից այն կողմ տանելը ասել է թե՛ պատերազմի հետ ապրելու վարքաբանությանը իմաստ հաղորդելը:

1. Պետության և անհատի դեմհանդիմանությունը

Դարերով պետականություն չունեցած մեր ժողովրդի գիտակցության մեջ պետությունը ժամանակ առ ժամանակ դիտարկվում է իբրև հարստահարիչ մի մեքենա, որի «մույթ» գործերին չի խառնվում ժողովուրդը, և ըստ այդմ իրադրությունը պարզ է՝ Աստծունը՝ Աստծուն, կայսրինը՝ կայսեր: Հավանաբար ժամանակ ու փորձ է հարկավոր՝ պետությունն ու իշխանությունը միմյանցից տարանջատել կարողանալու և պետականամետ ու իշխանամետ կեցվածքները չնույնացնելու ունակություն ձևավորելու համար: Այնուամենայնիվ, փաստ է, որ հայ անհատի գիտակցության մեջ ի հայտ են գալիս մտքեր սեփական բախտը իր երկրի, պետության ճակատագրից անջրպետելու վերաբերյալ: Կարելի է վերհիշել, իսկ ցանկության դեպքում տիեզերական հայելուն փոխարինելու եկած վիրտուալ աշխարհում կրկին լսելի դարձնել «քառօրյա պատերազմի» (2-5.04.2016) նախօրեին շրջանառվող թեզ-գուշակությունները՝ պատերազմի դեպքում Հայաստանը լքելու և նման արարքը համատարած դառնալու մասին: Թեզը լավագույն դեպքում համեմվում էր փաստարկներով, թե մի կողմից՝ ստեղծված իրավիճակը իր գործը չէ, որովհետև այն վերնախավերի երկուստեք սխալ դիվանագիտության արդյունք է, և այդ պարագայում միմյանց սպանողները որևէ խնդիր չունեն միմյանց հետ, մյուս կողմից՝ թե ինքը հավուր պատշաճի գնահատանքի չի արժանանալու, վկան՝ նախորդ փորձը:

Առավել խոր անդրադարձի պարագայում պետությունը ներկայանում է որպես իշխանությունը պահելու արդյունավետ միջոց և մանիպուլյացիայի գործիք: Պետությունը (իմա՝ իշխանությունը) ինքն է ստեղծում այլախոհությունը և դրանով իսկ հսկողության տակ պահում ամենայն հակաիշխանական գործունեություն: Հետևաբար թե՛ կրավորական, թե՛ ներգործական դիրքորոշման դեպքում անհատը առնվազն մեկ քայլ հետ է մնում պետությունից: Իրավիճակը գուցե հեռավոր, բայց խորքային նմանություն ունի մի իրողության հետ, որը ներկայացնում է Կ. Սվասյանը. «Հակասեմականությունն այսօր ոչ միայն այն է, երբ առիթով կամ անառիթ հիշում են հրեաներին, այլև երբ նրանց չեն հիշում բոլորովին»³: Սարսազդու պարադոքսայնություն... Փաստորեն, ոչ մի կերպ չի ստացվում արտահայտել սեփական եսը, սեփական խոսքը, տեսակետը. խոսքը հնացած է և ուղղորդվող-վերահսկվող, լռությունը՝ ինքնակործան:

Եվ եթե այս ամենը փոխադրենք աշխարհաքաղաքական համատեքստ, ապա այդ խճողված պատկերում անհատն է՛լ ավելի կփոշիանա, որով-

3 Свасьян К. Европа: два некролога. М., «Evidentis», 2003, с. 211 прим.

հետև պետությունների պայմանավորվածություններն ամբողջովին դուրս են մղում եզակի անհատին: Այստեղից էլ՝ օտարվածությունը պետության և քաղաքացու միջև: Նշվածին էլ գումարենք դասական դարձած քաղաքական տեխնոլոգիան, որ «իշխանությունը կարող է բեմադրել իր ինքնասպանությունը, որպեսզի վերականգնի գոյության և լեգիտիմության գոնե նշույլը»⁴: Ուստիև միանգամայն հնարավոր կլինի վարկած առաջադրել, թե պատերազմը կազմակերպվում է՝ ինչ-որ հարցեր լուծելու և, նախևառաջ, թույլ երևալու, ասել է թե՛ իշխանությունը երկարաձգելու համար: Ի դեպ, այս դիտանկյունից նոր լույս է սփռվում Ֆուկույամայի «ուժեղ պետությունների թուլություն»⁵ և, ենթադրելի է, «թույլ պետությունների ուժեղություն» հայեցակարգի վրա: Ահա այս կետում է, որ արդիականացման, վերափոխման կարիք է զգում «առասպելներից վերջինը՝ ազգայնականությունը» (Ժ.-Լ. Նանսի): Քանզի երբևիցե պատերազմական ոգին ապահովող կոչերն առ Հայրենիք, ազգ, երկիր և այլն, այսօրվա գիտակցությանը տարաբախտորեն կարող են մանիպուլյացիայի գոհ լինելու զգացողություն հաղորդել:

Սակայն հետաքրքրական է հետևյալը. սուբյեկտիվ մտածողության պարադոքսները սոսկ մտքի գվարձալի խաղեր են օբյեկտիվ մտածողության դիալեկտիկական հոլովույթի առջև, որտեղ Միտքը նույնչափ Կամք է և, ըստ այդմ, արարք է պարունակում: Արարքն է անտիոնմիաներով մանևրող դատողական մտածողության անպտուղ ընթացքը դադարեցնողը: **«Քառօրյա պատերազմի» օրերին կամային արարքը հօգս ցնդեցրեց ինքնանեխումի ենթարկված միտքը:** Եթե այդ իրավիճակը նկարագրելիս նույնիսկ փորձենք զերծ մնալ «ոգի» հասկացությունից, ապա, միևնույն է, ստիպված ենք վեր կանգնել էմպիրիկ, նկարագրական բացատրություններից և «նյութին» մոտենալ վերանձնային, ժողովրդայնության տրամաբանության դիրքերից: Իսկ ժողովրդի մասին ասված է. «...ժողովուրդների առօրյական մանրագործությունները չեն սպառում այն ամենը, որ տեղի է ունենում նրանց հոգու խորքում»⁶: Բայց ինչպե՞ս է մանրագործ անհատը վերածվում մեծագործ ժողովրդի մասնիկի, ինչո՞ւ են երկու իրար բոլորովին անծանոթ անհատներ մահու չափ սկսում ատել միմյանց: Սրա հետ առնչություն ունեցող մի հետաքրքիր իրողություն է պատմում Կ. Սվայանը, որը նրան ժամանակին պատմել է ականատեսը. երկրորդ աշխարհամարտի ժամանակ ռուս զինվորը Կալինինգրադ (Քյոնիգսբերգ) մտնելուց հետո այցելում է Կանտի գերեզման և գերեզմանաքարին սվինով Գալիլեյի ոճով փորագրում է հետևյալ խոսքերը. «Այնուամենայնիվ, աշխարհը նյութական է»: Իսկ որպես հետևություն ասենք՝ «եթե ստիպված ենք հասկանալ պատերազմը իբրև ինչ-որ բանի շարունակություն, ապա անկասկած ոչ թե քաղաքականության, այլ միայն **փիլիսոփայության**»⁷: Անշուշտ, կարելի է հակառակվել, ընդդիմանալ ռազմիկի՝ փիլիսոփայության կրող լինելու հանգամանքին: Բայց ստիպված ենք

4 Baudrillard J. Simulacres et simulation. Paris, Galilée, 1981, p. 35:

5 Fukuyama F. The End of History and the Last Man. Penguin books, 1992, p. 13-38:

6 Նժդեհ Գ. Երկեր, հատոր առաջին, Եր., 2002, էջ 249:

7 Свасьян К. նշվ. աշխ., էջ 220, 223:

պատասխանելու այն հարցին, թե **ինչպես է ստացվում, որ անհատը մահը դարձնում է նաև ուրիշներինը, որ, արհամարհելով աշխարհաքաղաքական անցուդարձերը՝ իրենն է դարձնում ուրիշի մահը**, կամ այլ կերպ՝ ինչպես է հնարավոր անձնագոհությունը:

2. Հերոսի կերպափոխությունները և հերոսականի հավիտենականությունը

Մեր օրերի սոցիալական պարադոքսներից մեկը կարելի է ձևակերպել այսպես. **որքան շատ են լսելի դառնալու միջոցները, այնքան դժվար լսելի է խորքային բովանդակությունը**: Այլ կերպ՝ սոցիալական ցանցերի «ինաստությունը», հետզհետե ավելացող սեղմավեպերը, բլոգային վճռաբեկ վերլուծությունները, հեռուստասերիալները, գովազդների գովազդները, պլակատային մշակույթը ժամանակ ու տեղ չեն թողնում Սուածողության, Զգացմունքի և Կամքի ծավալման համար⁸: Գիտակցելով, որ բոլոր ժամանակներում էլ, թերևս, շրջապատից բողոքն առկա է եղել իբրև մշտակա եղելություն՝ հարկ է, այնուամենայնիվ, նշել, որ ներկայումս «խոշոր անհատականությունների» բացակայության բողոքն ունի որոշակի օբյեկտիվ հիմքեր: Բանն այն է, որ մի կողմից՝ մարքեթինգի չափազանց շատ ներկայությունը, մյուս կողմից՝ արագ զարգացող տեխնիկայի օգնությամբ ամենակուլ կոնֆորմիզմի ընթացքը, հասարակական գործունեությունը դարձնում են առավելապես թիմային և ինստիտուցիոնալ: Ֆորդիզմը դառնում է կենսակերպ, իսկ առանձին անհատական կամային ջանքերը պարզապես փոշիանում են, մարդը վերածվում է որևէ կառույցի սուսկ մասնիկի: Անհատի ստեղծագործությունները մնում են աննկատ անդեմ համակարգերի գործունեության ստվերում: (Թերևս, սա է պատճառը, որ ժողովուրդը հերոսականի սով է զգում և հաճախ առիթը բաց չի թողնում աչքի ընկնողին «հերոս» հորջորջել): **Գույնզգույն, չափազանց գույնզգույն իրականությունը, մարդուն գրկելով «աչքը թարմ պահելու» հնարավորությունից, կլանում է մարդկային կենսահյուրը, իսկ ինքը երկաթե միջնորմ դառնում է ուրիշի և մարդու գիտակցության միջև**: Եթե այսքանն անփոփենք, պիտի կրկնենք. «Կռիվներում հերոսանալուց ավելի դժվար է կյանքում հերոսավայել կեցվածք ունենալը»⁹: «Դժվար է», քանի որ հասարակական անտարբերության պայմաններում ինքնագիտակցությունը չի գտնում իր դիպլեկտիկական զարգացումն ապահովող այլ ինքնագիտակցություն, մինչդեռ Հեգելի ձևակերպմամբ՝ **«ինքնագիտակցությունը հասնում է բավարարման միայն մեկ այլ ինքնագիտակցությունում»**¹⁰: Ըստ Հեգելի՝ ինքնագիտակցության հիմնական հատկությունը ճանաչված լինելու մղումն է: Դրա համար ինքնագիտակցությանը հարկավոր է ուրիշ ինքնագիտակցություն, որի դեմ կենսագ-մահու պայքարում միայն կարող է ճանաչվել և ազատություն ձեռք բերել: **Պայքարում ազատության բացարձակ ապա-**

8 Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Մոսինյան Գ., Մշակութային մեթոդաբանության և ազատության ողբերգությունը: Եր., Հեղինակային հրատ., 2011:
9 Նժդեհ Գ., նույն տեղում, էջ 270:
10 Hegel G. W. F. Phänomenologie des Geistes. Stuttgart, 1987, էջ 139:

ցույցը մահն է: Սակայն մյուս կողմից՝ պայքարողներից մեկի մահը բացառում է մյուսի՝ ճանաչված լինելու հնարավորությունը: Եվ որպես այդ մահի հետևանք՝ ի հայտ է գալիս էլ ավելի խոր հակասություն. նա, ով կյանքը վտանգի ենթարկելով ապացուցում է իր ազատությունը, այնուամենայնիվ, չի կարողանում վերջինս դարձնել օբյեկտիվ երևույթ: Ուստի ինքնագիտակցությունը կամենում է, որ մյուս կողմը չվերանա, այլ ստրկորեն հարգի իրեն իբրև տիրոջ¹¹: Ահա սա է պատճառը, որ հերոսականն իր մեջ գիտակցող անհատը տառապելով խուսափում է մակերեսային շքեղությունից և մահվան մեջ է տեսնում Աստուծոյի հետ վերամիավորվելու հնարավորությունը, քանզի «հանձարները սպանում են մանր գործերից, ժողովուրդները մեռնում են մանր առաքիլություններից»¹²: Ուրեմն որպես ազատ ճանաչված լինելու մղումը ներունակորեն կրողները միջավայր են փնտրում Հերոսականի գաղափարը անդրատենչությամբ վերակենդանացնելու համար: **Պատերազմն ու մահն են, փաստորեն, այն վայրը, որտեղ անհատը կարողանում է լսելի դառնալ, առանձնանալ բազմությունից և արդեն ոչ շտապողականորեն ձեռքել իր ուղին ու ամբողջովին դառնալ ինքը:** Ինչպես Վարուժանն է գրում՝ «Այս գոեհիկ աշխարհին վրա ամեն գերմարդ գոհ մըն է: Եվ առանց գոհի հերոս չկա»¹³:

3. Պատերազմը քաղաքակիրթ ժամանակներում

Ջոնը մեր օրերում որպես կանոն մտածվում է իբրև ողբերգության ծայրահեղ աստիճան, որը հարկավոր է բացառել ամեն գնով: Խաղաղությունն ու անվտանգությունը հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո դարձել են հասարակական կյանքի հիմնական նորմատիվ չափանիշները և բարձրագույն արժեքները: Այդ արժեքներին սրբորեն չհետևել հանդգնող ամենայն սուբյեկտ վերածվում է համայն աշխարհի թիրախի և ենթարկվում «դաստիարակչական» աշխատանքների (հիարկե, չնոռանանք, որ «դաստիարակն» ունի պատերազմի և խաղաղության իր չափանիշները): Բայց ի՞նչ անել, եթե հակառակորդը ոչ մի կերպ չի ցանկանում հրաժարվել պատերազմելու մտքից, եթե պատերազմը քեզ պարտադրվում է: Մյուս կողմից՝ «խաղաղություն» ասվածը խիստ հարաբերական է թե՛ ռազմական, թե՛ փիլիսոփայական իմաստով: Ովքեր են խաղաղության և անվտանգության երաշխավորները. գերտերությունները, միջպետական խոշոր կազմակերպությունները, որոնք չեն ենթարկվում նույնատիպ դատաստանի միջազգային իրավունքի խախտուտ լինելու (կամ գուցե չլինելու) պատճառով: Եվ արդյո՞ք գերտերությունների՝ սահմաններում տեղակայված զորքերի առկայությունը հետգաղութատիրության դրսևորում չէ, ինչը դիալեկտիկական առումով մեզ հետ է տանում դեպի նախապատերազմական դրություն և նախապատրաստում ազատագրական պատերազմի: Եվ, առհասարակ, դրսից պարտադրված խաղաղությունը լոկ վկայում է

11 Տե՛ս **Hegel G. W. F.** Enzyklopädie der philosophischen Wissenschaften, Dritter Teil. Suhrkamp, 1830, էջ 219–223:

12 **Ասատրյան Հ.**, Հատընտիր, Եր., 2004, էջ 61:

13 **Վարուժան Գ.**, Երկեր երեք հատորով, հատ. 3, Եր., 1987, էջ 117:

մոտալուտ մահվան կամ պատերազմի մասին ձիշտ այնպես, ինչպես որ «հենց սոցիալականի մահից էլ առաջանում է սոցիալիզմը, ինչպես Աստծո մահից առաջանում են կրոնները»¹⁴: Նույն կերպ կարելի է շարունակել, որ, օրինակ, Ֆեմինիզմը ոչ թե կնոջ ազատագրումն է, այլ կանացիության կորստի վկայությունը, որ առողջ ապրելակերպի նորաձև դառնալը, նախևառաջ, առողջության հիմնովին կորստի ահազանգն է և այլն: Ահա գերազանցապես այս սիմուլյակրների աշխարհում ապրելու հետևանքով պատերազմը սոսկ հուզական դիմադրության է արժանանում որպես բացարձակ չարիք: **Սակայն պատերազմին «լավ» – «վատ» եզրույթներով մոտենալը մեզ ծիծաղի առարկա է դարձնում համաշխարհային պատմության առաջ: Պատերազմն անհիծելը նույնն է, ինչ որ Տիգրան Մեծի գործունեությունը անբարոյական որակելը:** Ավելի դիպուկ ձևակերպմամբ՝ «Եթե պատերազմը հիվանդություն է, ապա պացիֆիզմը որպես բողոք պատերազմի հանդեպ նույնչափ անհեթեթ է, որչափ հիվանդի բողոքն իր հիվանդությունից»¹⁵:

Նշվածի շրջանակներում կանխատեսելի և հասկանալի է ավելորդ զգացմունքայինի, սենտիմենտալի սիմուլյացիան. սենտիմենտալություն զինվորի, զոհվածի, զինամթերք փոխադրողի, սահման օգնություն ուղարկողի, պատերազմական լուրեր ընթացողի հանդեպ, աշխատավորի, գյուղացու, մինչև անգամ թափառող շների նկատմամբ: Արդյո՞ք պաթետիկ սենտիմենտալությունը չենք օգտագործում՝ «վերևից» նայելու համար մեր զգացմունքի «զոհերին»: Կենդանիների իրավունքների հարցերով զօր ու գիշեր մտահոգվելը վերջին հաշվով անհարգալից վերաբերմունք է նրանց, նրանց ուժի ու բնույթի հանդեպ: Կարևոր է գիտակցել՝ «սենտիմենտալությունը սոսկ գազանության անվերջորեն այլասերված ձևն է»¹⁶: Արդ, պատերազմի առթիվ համընդհանուր խղճմտանքը արդյո՞ք անարգական չէ մարդկանց նկատմամբ, որոնք վտանգավոր միջավայր են որոնել հոգեվերանորոգչական ինքնագիտակցություն ապրեցնելու համար: Երբ որ ամեն կերպ ցանկանում ու մաղթում ենք պատերազմի ավարտ, հաճախ տեսնում ենք մի կողմը միայն. **պատերազմը չկա որպես իրականություն, բայց չէ՞ որ այն կա որպես հնարավորություն, և քանի որ դեռ չի պարավում իրականությունը, հնարավորությունը հասունանում ու պատրաստվում է պայթելու:** Այս առումով պատերազմը ամեն օր տեղի է ունենում բոլորիս գիտակցության մեջ, ուստի, նախևառաջ, հարկավոր է գործ ունենալ այդ պատերազմի հետ:

4. Տրավմա և մոռացում

«Այրիլյան պատերազմի» օրերին առաջացած ժողովրդական ոգևորության արագ մոռացումը մի շարք բողոքների առարկա դարձավ, և ամենքը սկսեցին մեղադրել ամենքին ուրացման մեջ: Այս ամբողջի համատեքստում չափազանց կարևոր է հասկանալ, թե **ինչպես էր հնա-**

14 Baudrillard J., նշվ. աշխ., էջ 46:

15 Свасьян К., նշվ. աշխ., էջ 217–218:

16 Baudrillard J., նշվ. աշխ., էջ 195:

րավոր այդօրինակ մոռացումը, և ինչ է նշանակում մոռանալ առհասարակ, թե ինչու մեկ դարից ավելի է՝ չենք մոռանում Եղեռնը, բայց հեշտությամբ մոռանում ենք երեկվա պատերազմն ու դրա հետ կապված համազգային ոգևորությունը:

Պատմության տեսաբանները և փիլիսոփաներն ընդհանրապես քիչ են անդրադարձել մոռացման խնդրին, գրեթե չեն բարձրացրել այն հարցը, թե ինչու և ինչպես են մոռացվում պատմության ինչ-ինչ դրվագներ: Առաջիններից մեկը, որ լրջորեն անդրադարձել է մոռացման երևույթին, եղել է Ֆ. Նիցշեն: Նա, պատմությունն ու կյանքը միմյանց հակադրելով, անդրադառնում է պատմության բեռ լինելու հանգամանքին և նկատել տալիս, որ ոչ պատմականորեն ապրելը, մոռացումը հաճախ մեզ մոտեցնում են կենսահմայությանը. «Ամենայն գործունեություն մոռացման կարիք ունի. ինչպես որ ամենայն օրգանական կյանք կարիք ունի ոչ միայն լույսի, այլև մթության»¹⁷: Սակայն այս դեպքում էլ ավելի կարևոր է մոռացման «ֆիզիոլոգիան» բացահայտելը:

Նախ՝ կարելի է խոսել առնվազն չորս տեսակի մոռացման մասին¹⁸: Առաջին տեսակը վերաբերում է անցյալի այնպիսի առօրեական, աննշան եղելությունների մոռացմանը, որոնք որևէ կապ չունեն մեր ներկայի կամ ապագայի ինքնության հետ: Դրանց մոռացումը հաճախ տեղի է ունենում ինքնաբերաբար, առանց ջանքերի և ազդեցություն չի ունենում հոգեկանի վրա:

Մոռացման երկրորդ տեսակն այն է, երբ մոռանում ենք (այսինքն՝ կարողանում ենք մոռանալ) երևույթներ, որոնք էական են մեր ինքնության և գործունեության համար, բայց ինչը նախկինում չենք գիտակցել (այս տեսակը հատկապես հետաքրքիր է հոգեվերլուծության դիտանկյունից):

Նշվածներն առավելապես վերաբերում են անհատական գոյության առօրեականությանը և խնդրո առարկա թեմային այնքան էլ չեն առնչվում: Այստեղ ավելի հետաքրքրական են մյուս տեսակները:

Մոռացման երրորդ տեսակն այն է, երբ կան բավականին ծանրակշիռ հիմքեր մոռանալու կամ, ավելի ճիշտ, ինքներս մեզ մոռացնել տալու անցյալի ինչ-որ դրվագներ. դրանք այն հիվանդագին և տրավմատիկ դրվագներն են, որոնց վերապրումը նշանակելու է դարձյալ անցնել նույն դժոխային տանջանքի միջով, իսկ որոշ դեպքերում սերունդների պարագայում՝ անցնել մահվան միջով: Որպես օրինակ կարելի է վկայակոչել Եղեռնը, որի ականատեսները հաճախ արտամղել են իրենց տպավորությունները՝ խուսափելու համար չափազանց տրավմատիկ փորձառությունից: Սակայն հարկ է հաշվի առնել, որ «տրավմատիկ փորձը փոխադրելով անգիտակցականի ոլորտ՝ մենք, անշուշտ, կարող ենք մոռանալ դա: Բայց այն պահպանելով այնտեղ՝ մենք **դրանով հանդերձ** հիշելու ենք այն անգիտակցական հիշողությամբ»¹⁹: Անգիտակցական հիշողությունը, ըստ էության, հիշողության հիշողությունն է: Ահա սա է հիմնական պատճառը, որ **մինչ այժմ չենք լուծել Եղեռնի հետ կապված մեր ներքին խնդիրները.**

17 Nietzsche F., Sämtliche Werke, KSA I. Deutscher Taschenbuch Verlagde Gruyter, 1988, էջ 250:

18 Տե՛ս Աнкерсмит Ф., Возвышенный исторический опыт. М., «Европа», 2007, էջ 439-443:

19 Նույն տեղը, էջ 441:

քանզի ո՛չ կարողանում ենք հիմնովին մոռանալ այն, ո՛չ էլ հիշել ու պատմել մինչև վերջ²⁰:

Վերջապես, չորրորդ տեսակն ամենահամապատասխանն է՝ մեր խնդրո առարկային մոտենալու համար: Խոսքը վերաբերում է երկու ինքնությունների կամ գիտակցականի և անգիտակցականի կոնֆլիկտին կամ մեկ այլ մոտեցմամբ՝ հիշողության և մոռացման հակադրությանը: Բանն այն է, որ «հենց որ տրավմատիկ փորձը հնարավոր լինի ներկայացնել նարատիվի ձևով (ինչպես որ սովորաբար տեղի է ունենում տրավմայի հոգեվերլուծական բուժման դեպքում), հենց որ այն հաջող կերպով ներգրավվի ինչ-որ մեկի կյանքի պատմության մեջ, այն կկորցնի իր չարագույժ և բուն տրավմատիկ բնույթը»²¹: Մյուս կողմից՝ **նոր փորձառությունը ամեն անգամ հայտ է ներկայացնում՝ ընդգրկվելու առկա ինքնության մեջ**: Իսկ դա, փաստորեն, տեղի է ունենում այն դեպքում, երբ մոռացվում է, այսինքն՝ տարրալուծվում է պատմության մեջ՝ ավելի հզոր դարձնելով ինքնությունը:

Մեր պարագայում այժմ պատմության հոլովույթը կանգնած է երկու տարբեր ինքնությունների՝ ցեղասպանության գոհի և անհաղթ ոգու հակադրության առաջ, որի վատագույն սցենարը կլինի այդ երկու ինքնությունների առանձին-առանձին գոյակցության հարատև շարունակականությունը, իսկ լավագույն տարբերակը դրանց համատեղ մոռացումն ու յուրակերտումն է: Ուստի, բողոքը, թե համազգային ոգևորությունը մոռացվեց, այնքան էլ հիմնավոր չէ կամ, ավելի ստույգ, միակողմանի է, քանզի, նախ, այն կա անգիտակցական հիշողության մեջ և համապատասխան միջավայրի դեպքում գլուխ կբարձրացնի, այնուհետև՝ մոռացվեց, ասել է թե՛ դարձավ **մերը**: Այլ հարց է, որ հարկավոր է մտածել այդ գորեղացած ինքնության ուղղորդման մասին:

5. Հիշելով մոռացումը

Մի անգամ Կանտի տանը երկար տարիներ աշխատած Լամպե անունով մի սպասավոր ինչ-որ բան է գողանում նրանից: Կանտն անմիջապես հեռացնում է նրան աշխատանքից, բայց այդ թեմայով հիշողությունները նրան հանգիստ չեն տալիս: Այդ անցանկալի մտքերից ազատվելու համար փիլիսոփան իր գրասեղանի վերևի մասում փակցնում է հետևյալ նշումը՝ *Lampe vergessen* («Մոռանալ Լամպեին»)՝²²: Առաջին հայացքից միամիտ արաք թվացող այս քայլը բավականին խորքային հորիզոններ կարող է բացել: Ինքներս մեզ անցյալի ինչ-որ դրվագ մոռանալ հիշեցնելով՝ անջրպետ ենք դնում մեր և այդ անցյալի միջև, ինչը նշանակում է, որ հնարավորություն է ստեղծվում պարպելով այդ թեման՝ յուրակերտել այն, չբողոքել՝ անհետ կորչի անգիտակցականի մարզում: Սա փոխադրելով մեր թեմայի ոլորտ՝ կարելի է արձանագրել, որ խնդիրն այն չէ, որ համազգային

20 Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Մոսիյան Գ.**, Եղեռնի մտածման հեռանկարները, նախապատմությունից դեպի պատմություն, «ՎԷՄ», 2015, N 2 (50), էջ 249-260:

21 **Анкерсмит Ф.**, նշվ. աշխ., էջ 442:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 433:

ոգևորությունը մոռացվեց, այլ այն, որ հիշելով, կամքով, վճռով չմոռացվեց, և որ այժմ սուկ հարմար առիթն ու միջավայրն են լինելու դա վերածնողը, այլ ոչ թե սուբյեկտը կամ սուբյեկտները: Եվ նաև ոչ «Շուշին», ոչ «ասպրիլյան պատերազմի» հաղթական տրամադրությունը հիմնովին մերը չեն դառնա, քանի դեռ մեզ չենք հիշեցրել մոռանալ պատմության սովերոտ կողմերը:

Դժվար չէ նկատել, որ մի ինչ-որ պահից սկսած՝ մեզ վտարել են անցյալից (կարելի է խոսել առնվազն 1915 թ. մասին), ուստի եթե անցյալում լինելու հնարավորություն չկա, ապա միակ ուղին անցյալն իմանալն է, քանզի գիտելիքն է, որ անսահմանորեն ձգտում է դառնալ կյանք: Ճիշտ է՝ «չմոռանանք նաև, որ մենք արդեն հաջողեցինք հաղթահարել մատաղի գառան «իմիջը», որ մեր նկատմամբ աշխարհում առաջացրել ենք միանգամայն նոր, ակնհայտորեն ակնածախառն վերաբերմունք»²³, բայց ակնհայտորեն դեռևս ներքին գառանը ասպետ դարձնելու խնդիր կա:

Դա հնարավոր է, թերևս, միայն անցյալում և ոգու տիրույթում տարածք նվաճելով, պատմությունն ըղձակերտելով, պատերազմների հետ համատեղ գոյակցելու ունակություն մշակելով, հաղթանակները ճակատագրի վերածելով:

Բողոքիարի հետաքրքիր բնորոշմամբ՝ «կենդանիները չունեն անգիտակցական, որովհետև ունեն տարածք: Մարդկանց մոտ անգիտակցականն ի հայտ եկավ լոկ այն բանից հետո, երբ նրանց կորցրեցին տարածքը»²⁴: Ահա այդ տարածքը վերագտնելու մասին է խոսքը:

Մակայն հոխորտացող պլակատայնությունից զերծ մնալու համար՝ ավարտենք՝ Կանդիդին միանալով. «Այդ բոլորը լավ է ասված, բայց պետք է մշակել մեր այգին»:

Դավիթ Ռ. Մոսինյան – գիտական հետազոտությունների բնագավառները՝ պատմության փիլիսոփայություն, մշակույթի փիլիսոփայություն, գիտության մեթոդաբանություն, կինոյի նշանագիտություն:

Summary

PHILOSOPHY OF WAR Thoughts on the “Four-Day War”

David R. Mosinyan

Key words – war, memory, oblivion, hero, heroic, trauma, unconsciousness, philosophy, identity.

Nowadays more substantial intellectual efforts are needed, not only to orientate in every time suddenly reorganized geopolitical picture, but also to determine the extent of your own participation in the certain war. It means that

23 **Աթայան Էդ.**, Մեր խաչը, «Ոգի և ազատություն», Եր., «Սարգիս Խաչենց», 2005, էջ 263:

24 **Baudrillard J.**, նշվ. աշխ., էջ 203:

